ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, ՀՍՍՀ Գ.Ա. հրատարակչություն, Երևան, 1984, 476 էջ։

Ավետիք Իսահակյանի հանճարեղությունը վաղուց է հաստատված ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ բաղաքակիրթ մարդկության դարավոր մշակույթի պատմության խստադույն ու երկարատև քննությամբ։ Նրա թոռան՝ Ավիկ Իսահակյանի, խնդիրը չէր կարող լինել այն, ինչ այլևս որևէ նոր բացատրություն կամ քննություն չի պահանջում, ինչ անառարկելի է «էն գլխեն», նույնիսկ իր ծննդից տասնամյակներ առաջ նա դիմել է դժվարին ու կարևոր մի այլ պրոբլեմի, որի նպատակը Վարպետի հանճարեղության՝ կաթիլ-կաթիլ կուտակման, լինելիության, կորուստների, բայց և շատ հաճախ ձեռքբերումների հաղար ու մի ճանապարհի ճշտությունը քննության առնելն ու գիտականորեն հաստատումն է եղել։ Հեղինակը հավաքել է այն ամենը, ինչ արժեքավոր է Վարպետի մտքի ու սրտի լայնքն ու խորքն է՛լ ավելի հստակ տեսնելու համար։ Անասելի դժվար է նոր խորքեր հայտնաբերել այն պարզության մեջ, որ տասնամյակների պատմություն ունի։

Վարպետի հետքերով ետ վերադառնալը ոչ միայն պատասխանատու, այլև հանդուգն ձեռնարկում է այն իմաստով, որ հեղինակը պարտավորված էր խորապես գիտակցել, որ ինքը պետք է նաև առաջ ընար վաղվա մեջ նրա ստեղծածի անանցանելիությունը տեսնելու համար։ Սակայն այդ ամենը իրագործելուց առաջ ուսումնասիրողը պարտավոր էր նախ ցույց տալ Իսահակյանի՝ որպես հայ բանաստեղծի, ազգային մեծությունը, նոր միայն գնար դեպի ռուս գրականությունը և այնտեղ չափեր նրան Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի ու Բլոկի մեծությամբ, հանգելով այն եզրակացության, որ դրանք բոլորը որքան անկրկնելի, որքան ինքնատիպ, նույնքան էլ հավասարազոր երևույթներ են, որոնք թեև ծնվել ու ապրել են տարբեր ժամանակներում, ազգային կյանքի տարբեր ալեբախումներում, սակայն մարդկության ճակատագրի հոգսերն ու ցավերը, նրա երազանքներն ու ձգտումները նրանց դրել են կողք-կողքի։ Եվ ահա «կողք-կողքիի» այդ զգացողությունը, որ ձեռք է բերվել ոչ թե սնապարծության, այլ ազգային հպարտության ազնիվ չափանիշով, հեղինակին մղել է դեպի նորանոր որոնումներ, որոնք պսակվել են նաև նոր ու կարևոր փաստաթղթերի հայտնաբերումներով։

Հեղինակի մի այլ հետևությունը նույնպես կարևոր է։ Նա ցույց է տվել, որ, այո՛, իր ճակատագրի փրկությամբ Իսահակյանը պարտավոր էր նաև ռուս ժողովրդին և նրա հոգևոր մեծերին։ Բայց այդքանով բավարարվելը միակողմանի, ուրեմն նաև թերի կլիներ ճշմարտությունը։ Իսահակյանի հոգևոր և մտավոր աշխարհի կարիքն, իր հերթին, զգացել է նաև ռուս ժողովուրդը։ Ահա հանճարների մարդկայնության այդ դարավոր ճանապարհին էլ հանդիպել ու զինակիցներ են դարձել նրանք։

Մի ուրիշ առավելություն էլ ունի գրախոսվող մենագրությունը։ Վարպետի կյանքի ու ստեղծագործության նոր տվյալները արխիվներից լույս աշխարհ բերելը կախված էր անթիվ դժվարություններից և, առաջին հերթին, դրանց ճշմարիտ ընտրության հետ։ Հայտնաբերել այս կամ այն փաստը դեռևս շատ քիչ բան է նշանակում. գլխավորը, դժվարինը, դրան խոսեցնելն է նախ այն լեզվով, որ «ժամանակին պիտի լեզու առած լիներ», բայց ինչ-ինչ պատճառներով մատնվել է համրության։ Եվ ապա, հարկավոր էր իմանալ, թե որքանով է ժամանակին «լեզու առած» կամ չառած փաստը ծառայում այսօրվա իրականությանը և ինչպիսին է դրա նորության աստիճանը։ Մեր խոսքը ոչ թե փաստի գեհիկ արդիականացման, այլ դրա՝ գալիքի համար ճշմարտության նոր ապացույցներ պահած հարստության մասին է։

Նաև այդ տեսակետից է հեղինակը փաստերի անխալ ընտրություն կատարել։ Արվեստագետը, առաջին հերթին, անզիջում մենամարտի մեջ է լինում ինքն իր հետ, որովհետև նա, ոեռևս պատանեկությունից, հետզհետե իր մեջ է առնում իրականության և՛ լույսը, և՛ խավարը։ Իսկ հետագայում, երբ նրա բարձր կոչումը պարտավորեցնում է վերցրածը վերադարձնել կյանքին, սկսվում է մի մեծ պայքար նրա հոգում կուտակված լույսի ու խավարի միջև։ Եվ քանի որ գրողը կոչված է վերադարձնել միայն լույսը, բարին ու գեղեցիկը, ապա նրա առջև մի այլ խնդիր էլ է ծառանում. ընդվզել խավարի դեմ, լույսով և լույսի մեջ՝ ժամանակի հանդեպ և հանուն մարդկանց կանգնելու համար։ Պատահում է՝ արվեստագետը դեպի լույսը

գնալիս չի կարողանում հաղթահարել իր այս կամ այն թուլությունը. քարշ է տալիս նաև խավարը։ Վարպետի նվիրվածությունն իր ժողովրդի մաքառող ճակատագրին վերջիվերջո հաղթող դուրս ելավ և նա, վերադառնալով հայրենիք, խավարի և ոչ մի ծվեն իր հետ չբերեց։ Այդքա՜ն մոլորություններից ու տատանումներից հետո այդքան մաքուր սրտով ու մտքի պայծառությամբ անցնել սահմանն այն նոր հայրենիքի, որի մասին բանաստեղծը դեռևս հստակ պատկերացում չուներ, իսկական սխրանք էր և՛ քաղաքական, և՛ գաղափարական, և՛ քաղաքացիական իմաստով։

Իսահակյանը հիմքից և խորն էր ճանաչում իրեն, գիտեր իր սրտի և հոգու հայրենասիրության կշիռը, դրա համար էլ չսխալվեց Սովետական Հայաստան բերող միակ ճշմարիտ ուղու իր ընտրության մեջ։ Գրականագետը նաև այդ ճշմարտությունն է խորապես գիտակցել և ռուսական պոեզիայից Վարպետի կատարած թարգմանությունները, ռուս բանաստեղծների մասին գրած նրա հոդվածները դիտել ու գնահատել երկու առումով. ի՞նչն է հարազատ եղել Վարպետի հոգուն և ինչն է է՛լ ավելի անսխալ դարձրել նրա վերջին և վերջնական ընտրությունը։

Իսահակյանը ռուս ժողովրդին մոտեցել է որպես համաշխարհային առաջադիմական պատմության դրական հերոսի, որի մարտնչող իդեալներին, հումանիստական առաքելությանը հապատացել ու ջատահել էր՝ առանց ետ նայելու, առանց հայացքը ուրիշ կողմ թեքելու։ Իսահակյանի հավատն ու նվիրվածությունը ռուս ժողովրդին, նրա գրականության մարդասիրական հզորությանը, անձնուրաց ու անբեկանելի էր։ Բնավ չափազանցություն չի լինի, եթե ոչ միայն նշենք, այլև պնդենք ու հաստատենք, որ Վարպետի ամբողջ կյանքը մի անընդմեջ անձնազոհություն էր, ձեռքբերումների, կորուստների, դառնությունների ու բերկրանքների մի երկար շղթա, որտեղ հաղթանակել են իր ժողովրդից ժառանգած հոգևոր արիությունն ու ազնվությունը, նրա՝ դարերի հարվածներ կրած, բայց և ոչ մի դարի մարդկային ձգտումներին չդավաճանած հեռատեսությունն ու անկոտրում համբերությունը։

Չափազանցություն չէ նաև այն, որ ուրիշ ոչ մի հայ գրողի չի վիճակվել Եվրոպան՝ գաղափարական, փիլիսոփայական ու գեղագիտական բոլոր մակընթացություններով ու տեղատվություններով իր մեջ առնել, ինչպես այդ վիճակվել է Իսահակյանին։ Ընդ որում, այդ ամենի մեջ նա մշտապես ու համառորեն որոնել է հայ ժողովրդի փրկության ուղիները։ Այդքանը դեռևս նրա ոչ միայն թափառական (ինչպես ասել են), այլ որոնող ճակատագրի կեսն է, մյուս կեսը իր վերցրածի պիտանիությունը ժամանակի հետ և դրա առաջադիմության տեսանկյունից ստուգել, ծանր ու թեթև անելն է, շատ գիտությունների գաղափարական, գեղագիտական ու սոցիալական գեղտոմսերից հրաժարվելը։ Դա, մենք կասեինք, տիտանական ինքնաստուգման, ինքնազննման և ինքնամաքրման պրոցես էր, որի ընթացքում դեն էին նետվում նույնիսկ այնպիսի տեսություններ, որ թեև ժամանակավոր, բայց ժամանակի մտքի տիրակալներ էին։

Ավիկ Իսահակյանը Վարպետի կյանքն ու գործը դիտել ու գնահատել է նաև այդ հոգևոր ու մտավոր ինքնարյուրեղացման տեսանկյունից։

Ռուսաստանն, անշուշտ, մեծ մտածողների ու արվեստագետների հայրենիք է, բայց Իսահակյանի կարիքը նա զգում էր, որպեսզի ազգեր ազատագրելու իր առաքելությունը վավերացներ նաև հայ մեծ մարդասերի հավատի կնիքը։ «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» մենագրությունը կարդալիս, մեզ մշտապես ուղեկցել է այն միտքը, թե Վարպետը քիչ է մտածել իր անձնական կյանքի մասին։ Նրա միակ հոգը իր ժողովրդի պատմության մեջ մնալն է եղել, այդ պատմությանը պատիվ բերելու առաքելությունը։ Այդպիսի անհատները ժամանակ չեն ունենում ետ գնալ իրենց թողած ոտնահետքերով, այլ մշտապես մտածում են այդ հետքերը ոտնահարված չտեսնելու մասին։ Մտածում և մաքառում են։ Հետազոտողը թեև երիտասարդ, բայց հանդգնել է նորովի և ավելի խոր հայացքի տակ առնել Վարպետի անցած հարուստ և անընդգրկելի կյանքը, ռուս գրականությանը նրա մատուցած Խառայության և ռուսների՝ նրա նկատմամբ ունեցած փոխադարձ սիրո ու նվիրվածության դիրքերից։

Տասնամյակներ առաջ մենք առարկել էինք մի գրողի այն կարծիքը, թե Իսահակյանը այլևս անցած էտապ է հայ պոեզիայի համար և վնասակար է «դեպի Իսահակյան» կոչը, որովհետև «պոեզիայի գալիքում նա չկա և լինել չի կարող»։ Առարկել ու պնդել ենք, որ Վարպետը մշտապես և՛ ներկայում ու ապագայում է, և՛ բանաստեղծական յուրաքանչյուր նոր ոերունդ նորովի է վաղը, տարիներ հետո, դարերի հեռաստաններում հանդիպելու մշտական ժամանակի իրավունք վաստակած արվեստագետին։ Հեղինակն, ահա, որպես նոր սերնդի ներկայացուցիչ, Իսահակյանին հանդիպել է ներկայում, բայց գնահատել է նաև գալիքի տեսանկյունից։ Եվ նրա խոսքը վերջինը չէ, որովհետև սերունդները երբեք վերջ չեն ունենալու։

Ավիկ Իսահակյանի մենագրության մեջ զգալի տեղ են գրավում այն էջերը, որտեղ խոսվում է Հայաստանում, Ռուսաստանում ու Եվրոպայում գոյություն ունեցող քաղաքական իրադարձությունների, պետությունների միջև բարդ փոխհարաբերությունների, հեղափոխական խմորումների և դրանց ելքի կանխագուշակումների մասին։ Առաջին հայացքից դա կարող է հիմնական նպատակից շեղում կամ հեռացում գիտվել։ Բայց նման հայացքը սխալ կլիներ։ Բանն այն է, որ Վարպետի մասին խոսելիս ոչ միայն անհնար, այլև անիրավացի կլիներ շրջանցել այն ժամանակը, կամ, ավելի լայն առումով, այն գարաշրջանը, որ XX դար է կոչվում։ Մի գարաշրջան, որ ծնել է արվեստագետին և ապա մենամարտել նրա հետ։ Այդպիսին է գարաշրջանի բնավորությունը։ Միշտ չէ, որ նա շոյում է իր զավակին։ Այդ հանճարեղ զավակն էլ ոչ միշտ է վստահում ժամանակի շոյանքների անկեղծությունը։ Եվ չնայած այդ մշտական մենամարտին, հանճարները փրկում են դարերի կուտակած լավն ու գեղեցիկը։

Որքա՜ն, որքա՜ն իդեալներ է Իսահակյանն իր սրտի մեջ առել, ծանր ու թեթև արել, թեթևը, այսինքն անհեռանկարը, դեն նետել, ծանրը պահել մի մեծ ու փրկարար հառաջանքի համար։ Ահա թե ինչու նրա հոգում ղողանջել են նաև տառապանքը, հայկական մեծ վիշտը, որ նաև համաշխարհային էր, և մարդու, մարդկային խոր սերը, որ նույնպես մարդկության հոգսերով էր փոթորկված։ Մուժիկական այն ուժը, որ ռուսները տեսնում են Լև Տոլստոյի մեջ, իր մի շարք կողմերով շատ է հարազատ Իսահակյանին։ Եվ բնավ պատահական չէ, որ իր խոսքը նա ուղղում էր Արարատին.

Հիմա հերթը քոնն է մի պահ
Դու էլ նայիր Արարատի սեգ կատարին
Ու անցիր։

Մեծերը իրենց հոգու նաև վերջին լույսն են պահ տալիս բարձր կատարներին, որովհետև համոզված են, որ արևածագին այդ լույսը առաջինն է բոցավառվելու այդ նույն կատարին։ Այդպես են ոչ թե հեռանում, այլ ապագա դառնում սրտի ու հոգու մուժիկները, որոնցից մեկն էլ Ավետիք Իսահակյանն է։

Գրականագետը յուրովի է անդրադարձել նաև Իսահակյանի հոգևոր կենսագրությանը։ Նախ մանկությունից մտել է հեքիաթների աշխարհը, դարձել շոայլ երազող, ապա հանդիպել է գեղջուկ մարդկանց, տեսել նրանց տխուր ու արտասվող կյանքը, երազում տեսածը համեմատել՝ իրականի հետ, դառնացել ու վար իջել պատրանքների բարձունքներից, որտեղ ամեն ինչ՝ և՛ հաղթանակը, և՛ պարտությունը, հեշտությամբ էր ձեռք բերում։ Վարպետի երկրորդ քայլը դժվարությունների ճաշակումն էր։ Հետագայում, երբ նա սկսում է իրականության մեջ որոնել այն բարին, որ հեքիաթներում հեշտությամբ պարտության է մատնում չար ուժերին, տեսնում և համոզվում է, որ իր իմացած հեքիաթը կյանքում չի կրկնվում։ Եվ նա իրականությունից ոչ թե փախուստ է տալիս, այլ այն տանում է երկինք, այնտեղ և՛ առելու, և՛ խարազանելու համար։ Ստացվում է բավականին հետաքրքիր մի տեղատվություն. սկզբում Իսահակյանին ցավ է պատճառել գրականի պարտությունը, իսկ հետո այդ նույն առելի կյանքը տարել է երկինք, այնտեղ, իդեալների աշխարհում, խարազանելու համար։ Սակայն դա չէր այն ելքը, որ որոնում էր Իսահակյանը։ Եվ նա վերստին ցած է իջնում իր պատրանք-բարձունքներից, այս անգամ արդեն մարդկանց հետ տառապելու, նրանց վիշտն ու ցավերը կիսելու և արդարության համար մարտնչելու։ Սակայն, ինչպես նշել է գրականագետը, «վայրէջքի» այդ գիտակցությանը գալու համար բավական չէր միայն հայ ժողովրդի ճակատագրի փորձը, որովհետև արդարությունն ու ազատությունը սոսկ ազգային ըմբռնումներ չեն։ Հետևվարար նա պարտավոր էր նաև իմանալ, թե ուրիշ հոգևոր մեծերը ինչի են ձգտել, ինչ ուղիներ են որոնել և դեպի ուր են ցանկացել առաջնորդել իրենց ժողովուրդներին։ Ինչ խոսք, յուրաքանչյուր ժողովրդի՝ ազատության համար մղվող պայքարն ունի իր առանձնահատկությունը, բայց վերջնական նպատակը համամարդկային է, հետևաբար և ազգային։ Իսահակյանը ուրիշ մտածողների ու արվեստագետների մոտ տեսավ այդ համընդհանուրը, որ շատ էր հարազատ հայ ժողովրդի ճակատագրին։ Եվ վերստին հարկ է նշել, որ նաև այդ տեսնելու ընթացքում Իսահակյանը հոգևոր ու մտավոր կեռմաններ և ոչ քիչ թվով կորուստներ է ունեցել։ Բայց դրանք, եթե պարտադիր չէին, ապա անխուսափելի էին մի արվեստագետի համար, որ մշտապես եղել է պատմության հորձանուտում։ Ու եթե հնար լիներ ստույգ իմանալ չափն այն ամենի, ինչ Վարպետը նզովել ու մերժել է, և այն, ինչ նա երազել է, ապա կտեսնենք, որ առելին խորտակվել, երազանքը հաղթանակել, գեղեցիկ իրականություն է դարձել։ Ուզում ենք մեկ

անգամ ես հաստատած լինել, որ Իսահակյանի և՛ ստեղծագործությունն է երկրային եղել, և՛ երազանքը։ Ստեղծագործության մեջ նա հեռու չէր իրականությունից, իսկ երազանքով շատ մոտ էր ապագային։

Եվ մի՞թե զրանում չէ հանճարեղությունը մի արվեստագետի, որ խորապես գիտակցում է, թե ինչն է անցյալ դառնալու, ինչը՝ գալիք, և ինքը որի հետ է լինելու՝ անցյալի՞, թե՞ գալիքի։

Իսահակյանը մշտապես գալիքի հետ էր, սակայն այն գալիքի, որից անբաժան էր նաև չանանցյալ անցյալը։

Ավիկ Իսահակյանը ո՛չ միայն նոր, այլև արժեքավոր մի ուսումնասիրություն է ստեղծել։ Գրում են շատերը, բայց դժվարը՝ ստեղծելն է, նաև գրականագիտության մեջ արվեստագիտակերպարի նոր գծերի հայտնաբերումը։ Ավիկ Իսահակյանը հաղթահարել է այդ դժվարինը, որը նրա առջև հրամայական մի այլ խնդիր էլ է դրել. ձեռնամուխ լինել «Իսահակյանը և համաշխարհային պոեզիան» պրոբլեմային մենագրության ստեղծմանը։

ՎԱՉԳԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու